լութեան և խոստման իւրոյ և հաստուցանել խոստացեալս իբր պարտականի։

ԳԼՈՒԽ ՃԿԱ.

Ամենայն կաղ և կոյր, ծեր և պառաւ, աղքատ որ ոչ ունիցի ուստերս և դստերս մխիթարեսցի 'ի տանէն հայոց, լցուցանելով կարիքս անձին իւրոյ չափաւորապէս։

ԳԼՈՒԽ ՃԿԲ.

Մէնջ ամենայն հայոց պատրաստ գտցի տեղի դեղօրէից վասն բժշկութեան տկարաց, աղքատաց ծախիւք տանն հայոց բժշկաւ հանդերձ և ձրի բաշխեսցի 'ի վերայ ամենայն կարօտելոց առանց վարձու։

ԳԼՈՒԽ ՃԿԳ.

'Ի միջի ամենայն պտղոց և բուսոց ուտելեաց 'ի բուսմանէ երկրէն հայոց, միմիայն արհամարհեալ լիցի պտուղն անուանեալն բակլայ, և բուսն անուանեալն սիբեղ և կոտեմ, մի՛ ոք վարեսցի այսոքիկ 'ի արտի իւրում, զի յոյժ վնասակար է բնութեան մարդոյ։